Էրաւ, դարձաւ, կանչից գլուր Աստուած, ուրքեր[1]) ըմ զարկից ձիուն, բիրդան թռաւ, ընցաւ գՊղնձէ բադան քեաղքի մէջ (չէ՞ քեաղաք տիւռ չ'ունէր, տը թռնէր, ընցնէր)։

Շատ կան էկաւ քեաղքի մէջ, իրա քէֆով տեղ ըմ չ'գնդաւ, որ նստէր։ Էկաւ, խասաւ քեաղքի կուշտ, մէկ խայու խան ըմ գնդաւ. ըսաց. «Ափօ ջան, էս խանի քիրէն[2]) ի՞նչ ի»։

Ասաց. «Ո՛րտի, ձիուն մէկ կրուշ, մարդուն քսան փարայ»։

—Թ' Ափօ, ես կ'տամ ձիուն էրկու կրուշ, իմ գլխուն իրիք կրուշ (գինք քանց ձին աւելցըցուց), իմ ձիուն աղէկ տիրուԹիւն կ'անիս։

Ձին իդի կապից, գնաց մէջ քեաղքին կան կեալու։ Քառասուն փուռ փուդրաԹ էրաւ, ըսաց. «Օրական ի՞նչ կ'աշխատիք, փոռունչիք»։

Թէ՝—Տաս մաջիդեայ, տասնըմէկ մաջիդեայ։

—Թէ որ տիւք տաս մաջիդեայ, տասնումէկ կ'առնէք, ես կ'տամ ձեզ չուրս ոսկի օրական, էդ խացիր չիմն ի, ձը տուէք։

Գնաց քառասուն էլ չիւր բիրող բռնից. էսաց. «Օրական ի՞նչ կ'աշխատիք»։

Թա՝—Օրական տաս կրուշ։

—Ախպէր, ես կ'տամ օրական մէկ սըլտակ[3]) մաջիդեայ, տիւք էդ չիւր հէչ մարդու չ'բիրէք, ձի խամար բիրէք։

Էլաւ, մէկ խաց առից փռունից, դարձաւ, էկաւ ուր խան։

Իր խաց կերաւ, ասաց. «Ափօ ջան, էսաց, մէ խարցումս[4]) էնիմ քենէ»։

Թ'ասաց. «Որտի, ի՞նչ խարցումս»։

Ասաց. «Էս քեաղքի անուն ի՞նչ կ'ըսին»։

Ասաց. «Որտի, էս քեաղքի անուն Պղնձէ քեաղաք կ'ըսին»։

—Դէ, կ'ըսէ, Պղնձէ քեաղաք էստի՞ղն ի։

Կ'ըսը. «Հա՛»։

Կ'ըսը. «Պղնձէ քեաղքի Թագաւոր մէկ աղջիկ ըմ ունի, ի՞նչ

---

[1]) Ասպանդակ։ [2]) Վարձ։ [3]) Սպիտակ։ [4]) Հարց։